«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 8
24.03.2022թ.

1. Համալսարանում վճարովի համակարգում սովորող ուսանողների 2021-2022 ուս. տարվա երկրորդ կիսամյակի ուսման վարձավճարների զեղչերի քննարկման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց:

1.1. 2016թ և 2020թ պատերազմների ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած ՀՈՒԴ ուսանողների համար սահմանել ուսման վարձի 20% զեղչ և չհաշվել ՄՈԳ-ի ցուցանիշը:

1.2. Հաստատել նիստի ընթացքում ներկայացված համալսարանի տարբեր ստորաբաժանումների ուսանողների ուսման վարձի զեղչերը *(հրամանները կցվում են)*.

Ստորաբաժանումը	ՈՒսանողների թիվն՝ ըստ ուսման վարձավճարի զեղչի չափի			
	50%	30%	20%	Ընդամենը
ԱՃՖ	1	2	8	11
ԱՏՖ	2	4	9	15
ԱՖ	-	-	5	5
ԱԲԱՖ	-	2	8	10
ՊՏՖ	1	2	22	25
Սիսիանի մ/ճ	3	6	3	12
Ագրոբիզնեսի դեպարտ.	-	-	3	3
Վանաձորի մ/ճ	2	1	1	4
Ա. Քոչինյանի անվ. գ/տ քոլեջ	1	8	2	11
ՀՈՒԴ	3	4	48	55
Ընդամենը համալսարանում	13	29	109	151

1.3. Հանձնարարել ՈՒԳԿ վարչության պետ Ա. Աղասարյանին 2022-2023 ուս տարվա ուսման վարձավճարի զեղչի սահմանման համար վերանայել ՄՈԳ-ի նվազագույն շեմը և ներկայացնել ռեկտորատի հաստատմանը:

2. Դասախոսների մասնագիտական որակավորման բարձրացման գործընթացի վիճակի և խնդիրների վերաբերյալ.

2.1. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին մեկ ամսվա ընթացքում ներակայացնել ստորաբաժանման վերապատրաստման ծրագրերի պլան-ժամանակացույց, նշել թեմատիկ հիմնական ուղղությունները, ֆինանսական աղբյուրները, վերապատրաստող ու վերապատրաստվող մասնագետներին): Պլան-ժամանակացույցում ընդգրկել նաև մանկավարժական հոգեբանությանը, մանկավարժության մեթոդաբանությանը, փափուկ հմտություններին առնչվող թեմաներ,

2.2. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին վերահսկել վերապատրաստված դասախոսների կողմից ձեռքբերված մասնագիտական նոր

գիտելիքի, հմտությունների ու կարողությունների կիրառումը ուսումնական գործընթացում՝ ապահովելով կրթական միջավայրի, մեթոդների, գործիքակազմի արդիականացումը:

2.3. Հանձնարարել Վանաձորի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Մ. Գիգորյանին, ՈՒԳԿ վարչության պետ Ա. Աղասարյանին և դեկաններին՝ Zoom հրաթակով կազմակերպել Վանաձորի մասնաճյուղի դասախոսական կազմի վերապատրաստում համալսարանի աշխատակիցների հետ:

3. Ուսումնական պարապմունքների կազմակերպման ընթացքի, նախաավարտական կուրսերի ուսանողների հաճախումների (30% և ավելի բացակայություններ ունեցող), աշխատանքային կիսամյակի կազմակերպչական աշխատանքների վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց:

3.1. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին խստորեն վերահսկել ուսումնական պարապմունքերին ուսանողների հաճախումների գրանցման կարգապահությունը:

3.2. Հանձնարարել միջազգային կապերի և կրթական բարեփոխումների աշխատանքների գծով պրոռեկտոր Մ. Մովսիսյանին մեկ շաբաթյա ժամկետում մշակել աշխատանքային կիսամյակի կազմակերպման ուղեցույցը, տրամադրել գործատուներին և ստորաբաժանումների ղեկավարներին:

3.3. Հանձնարարել ագրոնոմիական ֆակուլտետի դեկան Ա. Տեր-Գրիգորյանին 2022թ մարտի 28-ին ներկայացնել աշխատանքային-արտադրական պրակտիկա մեկնող ուսանողների ցուցակը՝ պրակտիկայի վայրերով:

3.4. Համալսարանի առկա ուսուցման բակալավրիատի նախաավարտական և ավարտական կուրսերի վերջին կիսամյակում (կրեդիտային պարտքով հաջորդ կուրս փոխադրվելու հնարավորության բացակայություն) ուսումնական պարապմուքներից ուսանողների անհարգելի բացակայությունների նվազագույն շեմը սահմանել 60%:

4. Վանաձորի մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ.

Հանձնարարել ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի դեկան Ա. Սիմոնյանին և SS կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին կազմել մասնագիտական հանձնախմբեր, որոնք կգնահատեն Վանաձորի գյուղատնտեսական քոլեջ ՊՈԱԿ-ում առկա մեքենասարքավորումների, հաստոցների, ինչպես նաև համակարգիչների պիտանելիությունն ու տեխնիկական վիճակը:

5. Համալսարանի քոլեջների, առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի, հեռակա ուսուցման մագիստրատուրայի ավարտական կուրսերի դիպլոմային աշխատանքների/մագիստրոսական թեզերի կատարման նախապատրաստական աշխատանքների և խնդիրների վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց.

5.1. Ընդունել ի գիտություն:

5.2. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին աշխատանքներ իրականացնել դիպլոմային աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների արդիականացման ուղղությամբ, բացառել կրկնությունները:

6. Համալսարանի 2022-2023 ուս. տարվա ուսման վարձավճարների չափերի սահմանման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց 2022-2023 ուս. տարվա բակալավրիատի կրթական ծրագրերի ուսման վարձավճարները՝ մասնագիտությունների առանձնահատկությունից ելնելով, բարձրացնել 5-ից 10%-ով և դրական երաշխավորությամբ ներկայացնել ՀԱԱՀ գիտական խորհրդի հաստատմանը:

7. ՀՈՒ դեպարտամենտում իրականացվող ավարտական աշխատանքների պաշտպանությունների վերաբերյալ.

7.1. ՀԱԱՀ հեռակա ուսուցման դեպարտամենտի 2021-2022 ուս. տարվա ավարտական կուրսերի հետևյալ ուսանողներին, ովքեր առողջական խնդիրների պատճառով չեն մասնակցել ավարտական աշխատանքների պաշտպանությանը, ընձեռել առկա համակարգի ուսանողների հետ ավարտական աշխատանքները պաշտպանելու հնարավորություն *(հրամանները կցվում են)*.

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Մասնագիտությունը, կուրսը
1	Աղաբեկյան Տարոն Լևոնի	Փոխադր. և ճան. երթևեկ. կազմակերպում և կառավ. - 6
2	Գալոյան Ժիրայր Գալոյի	Ագրոէկոնոմիկա և սննդարդ. էկոնոմ.- 6
3	Սարուխանյան Արմեն Հայկարամի	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա - 6
4	Գալստյան Կարեն Գալուստի	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա - 6
5	Միլիտոնյան Կորյուն Կարենի	Խմորմ. արտադ. տեխն. և գինեգործ.- 6
6	Խաչատրյան Գոռ Արտակի	Հողաշինարար., հողային կադաստր - 6
7	Ամիրյան Արսեն Հովիկի	Ագրոէկոնոմիկա և սննդարդ. էկոնոմ.- 6

7.2. Հանձնարարել ՈՒԳԿ վարչության պետ Ա. Աղասարյանին, իրավաբանական բաժնի պետ Մ. Վարդանյանին և ՀՈՒԴ պետ Հ. Հարությունյանին 2018-19 ուս. տարվա հողաշինարարություն և հողային կադաստր մասնագիտության ավարտական կուրսի ուսանող Արտակ Գեղամի Մեջլումյանի ավարտական աշխատանքի պաշտպանության թույլտվության հարցը լրացուցիչ քննարկել և կայացնել որոշում:

8. Համալսարանում կազմակերպվող կարճաժամկետ դասընթացների վերաբերյալ.

8.1. Ընդունել ի գիտություն:

8.2. Հանձնարարել ՊՏՖ դեկան Ս. Դավեյանին մեկ շաբաթյա ժամկետում ներկայացնել պանրագործության, ֆունկցիոնալ հացի ու հրուշակեղենի, գարեջրագործության, շոկոլադագործության, մրգային օղիների արտադրության և այլ թեմաներով մասնագետների վերապատրաստման կարճաժամկետ դասընթացների կազմակերպման պլան-ժամանակացույց:

9. Համալսարանում ուսման վարձավճարների հավաքագրման հարցի վերաբերյալ.

9.1. Ընդունել ի գիտություն:

9.2. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին.

- ուսանողների հեռացման հրամանները ձևակերպելիս խստորեն հետևել գործող կարգերին,

- ՀԱԱՀ իրավաբանական բաժնին պարբերաբար (յուրաքանչյուր ամսվա ավարտին) ներկայացնել համալսարանից հեռացվող՝ վարձավճարի պարտքեր ունեցող ուսանողների փաստաթղթային փաթեթները:

9.3. Հանձնարարել համալսարանի գլխավոր հաշվապահ Մ. Պողոսյանին սեղմ ժամկետում ռեկտոր Վ. ՈՒռուտյանին ներկայացնել համալսարանի ստորաբաժանումներում վարձավճարների հավաքագրման իրավիճակը:

10. ՀԱԱՀ ՀՈՒԴ և Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի ուսումնական գործընթացները e-Buh համակարգով իրականացնելու հարցի վերաբերյալ.

Հանձնարարել ՏՏ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին 2022-2023 ուս. տարվա սեպտեմբերի 1-ից ՀԱԱՀ ՀՈՒԴ և Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի ուսումնական գործընթացներն իրականացնել e-Buh համակարգով:

11. Համալսարանի ուսումնական գործընթացի հետ կապված որոշ հարցերի վերաբերյալ.

11.1. Հանձնարարել միջազգային կապերի և կրթական բարեփոխումների աշխատանքների գծով պրոռեկտոր Մ. Մովսիսյանին և իրավաբանական բաժնի պետ Մ. Վարդանյանին քննարկել ագրարային մենեջմենթ միջազգային մագիստրոսական ծրագրի համակարգողի կողմից ագրարային մենեջմենթ միջազգային մագիստրոսական ծրագրի Կանոնադրությունում փոփոխություններ կատարելու առաջարկը և, անհրաժեշտության դեպքում, ներկայացնել ՀԱԱՀ գիտական խորհրդի հաստատմանը:

11.2. Հանձնարարել միջազգային կապերի և կրթական բարեփոխումների աշխատանքների գծով պրոռեկտոր Մ. Մովսիսյանին, ՈՒԳԿ վարչության պետ Ա. Աղասարյանին, ՏՏ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին կազմակերպել լրացուցիչ քննարկում՝ ԿԳՄՍՆ ռազմավարական պլանավորման բաժնի աշխատակիցների կողմից բարձրացված հարցերի շուրջ և ներկայացնել առաջարկություններ:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ